ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

ԵԼԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆԻ

(շարունակութիւն [1])

III

Անտարակոյս, Շահազիզեանի սիրելի հեղինակների շարքը չէ վերջանում բանաստեղծների անուններով. քիչ թէ շատ նա ուշադիր էր անշուշտ և գիտնական գրականութեանը, մանաւանդ այն ճիւղերին, որոնք մօտիկ յարակցութիւն ունէին իւր մասնագիտութեան հետ. և թէպէտ մենք չենք կարող նոյն ճշդութեամբ որոշել զանազան գիտնականների և մտածողների ազդեցութիւնը Շահազիզեանի վրայ, բայց այդ ազդեցութեան ներկայութիւնը կողմնակի կերպով խոստովանում է մեր հեղինակն ինքը. այսպէս օրինակ, Շահազիզեանի գրքոյկի մէջ մենք գտնում ենք յիշատակութիւն «լրջամիտ» Բոկլի յայտնի պատմական երկասիրութեան և Ջ. Ստ. Միլլի և Կունտ-Ֆիշերի աշխատութիւնների մասին։

Աւելորդ է ասել, որքան օգտակար պիտի լինէր մեր բանաստեղծի համար օտար գրականութեան ուսումնասիրութիւնը։ Դիտելու է, որ յիշած ռուս և եւրոպացի մատենագիրներից համարեա ոչ մէկը այսպէս կոչուած «միջակներից» չէ. Նէքրասովը, Բայրոնը, Գեոթէ, Հէյնէ, Լէօպարդի, Բերանժէ, Պուշկին, Լերմոնտով, Բոկլ, Միլլ... այս անուն-

[1]) Տե՛ս «Մուրճ» № 3 և 5։

ների հետ անխզելի կերպով կապված է տիեզերական մասենագրութեան յառաջադիմութիւնը։ Բայց մի բան որ արժանի է խորին ուշադրութեան, մի բան որ մեր ձեռն է տալիս մեր բանաստեղծի ստեղծագործութիւնների բանալին—այն է որ Շահազիզեանի սիրած գիտնականներից ոչ մէկը մետաֆիզիկ չէ, և բանաստեղծներից ոչ մէկը զուտ գեղարուեստական չէ։ Նկատեցէ՛ք, որ այնպիսի գեղարուեստական հանճարներ, որպիսիք են Գեօթէ ու Պուշկին, համեմատաբար աւելի փոքր բաժին ունին Շահազիզեանի պոէզիայի մէջ, քան Բայռնը ու Լերմոնտովը, որոնք թէև իրանց գեղարուեստական տաղանդով ստոր են կանգնած աւաջիններից, սակայն իրանց բանաստեղծական արտադրութիւնների մէջ կենդանի արձագանք են եղել ժամանակակից հասարակական և քաղաքական շարժումներին. ահա՛ մի նշան Շահազիզեանի տաղանդի հրապարակախօսական բնաւորութեան։

Դէպի հրապարակախօսութիւնն էին հրաւիրում մեր բանաստեղծին և իւր ժամանակի պոլիտիկական և սոցիալական փոփոխութիւնները թէ Ռուսաստանում ընդհանրապէս և թէ Արևմտեան-Եւրոպայում։ Այդ փոփոխութիւնները չափազանց թարմ են ընթերցողների յիշողութեան մէջ, որպէս զի հարկ լինէր այստեղ կանգ առնել մանրամասնութիւնների վրայ։ Յիշենք միայն, որ այդ ժամանակը բանաստեղծների օրհնած երկրի և հիւսիսային մեծազօր տէրութեան ազգային վերածնութիւն և միաւորման դարագլուխն էր. կարո՞ղ էր միթէ Շահազիզեանի հայրենասէր հոգին այդ՝ աշխարհ թնդացնող յեղափոխութիւններին ու բիր բարեկորոգումներին ձայն չը տալ՝ այն էլ վերածնուող պետութեան կենտրոնում, ճորտութեան կապանքներից ազատուած բազմամիլիոն ազգաբնակութեան երկրորդ մայրաքաղաքում։

Բայց բացի բուն պատմական անցքերից՝ Շահազիզեանի տաղանդի զարգացման և աշխարհայեցողութեան վրայ հզօր ներգործութիւն է ունեցել և ժամանակակից ռուսաց գրականութիւնը։ Նախորդ շրջանում ռուսաց գեղեցիկ դպրութեան մէջ Գոգոլի շնորհիւ հաստատուած ռէալական ուղղութիւնը այժմ խոր արմատներ էր արձակել մանաւանդ վիպագրութեան մէջ. մի խումբ երիտասարդ հեղինակներ, զանազան կողմերից մօտենալով ժողովրդի կեանքին,

ճշգրիտ գծերով պատկերացրին նրան մի շարք գեղարուեստական գրուածներում, որոնք հասարակութեան ճաշակն ու միտքը կրթելուց զատ, պատուաւոր տեղ պատրաստեցին ռուսաց վէպի համար ընդհանուր գրականութեան հանդիսարանում։ Միաժամանակ նոր հոսանք ընկաւ և պուբլիցիստիկայի և կրիտիկայի մէջ։ Պարբերական մամուլը իւր յառաջադիմական և ազատամիտ օրգանների բերանով մի կողմից համարձակ և անողորմ քննադատութեան ենթարկեց նախարէֆորմեան Ռուսաստանի կարգերը, միւս կողմից խրախոյս և աջակից եղաւ վերանորոգել կայսրի կառավարութիւնը, ընթերցող դասի առաջ նորա իմաստուն գործառնութիւնների ու մտադրութիւնների անկեղծ և անխարդախ թարգմանը հանդիսանալով։ Բէլինսկու էսթէտիկական քննադատութիւնը, որ սահմանափակւում էր գրական երևոյթների լոկ գեղարուեստական գնահատութեամբ, չը կարողացաւ գոհացնել նոր զաղափարներով համակուած գրողների սերնդին. առաջ եկաւ մի ուրիշ կրիտիկական դպրոց, որ ջանք էր անում թափանցել նաև հեղինակի անձնական և հասարակական իդեալների շրջանը։ Ինքը ռուսաց գրական քննադատութեան նահապետը սահմանած եղաւ տեղի տալ այդ ուղղութեան առաջ և իւր գործունէութեան արևմուտքին՝ հրաժարուեց իւր նախկին մոլորութիւնների մի նշանաւոր մասից։ Այսպիսով, նոր թագաւորութեան սկսելովը ասպարէզը մնաց Դոբրոլիւբովին և Պիսարևին։ Յայտնի է, որ իրանց միակողմանի և երբեմն ծայրայեղ տեսութիւններով հանդերձ, այդ տաղանդաւոր քննադատները ունէին այն բացարձակ առաւելութիւնը, որ ձգտում էին գրականութիւնը ծառայեցնել կեանքին, և գուցէ ոչ մի ժամանակ ռուսաց իրական կեանքի և գրականութեան կապը այնքան զորեղ չի եղել, որքան չիսնական և վաթսունական թուականներում։

Ահա հէնց ռուսաց բելլետրիստիկայի այդ ուէալական ուղղութեանն ընդհանրապէս և գրական քննադատութեան նոր՝ օգտախնդիր (ուտիլիտար) պրինցիպին մասնաւորապէս աշակերտում է և մեր բանաստեղծը։ «Կեցցէ սուրբ գործը» երգի մէջ Շահազիզեանը ցաւով է մտաբերում այն ժամանակը, երբ ինքը «անհոգ քնարի լարերով» երգում էր միայն սիրոյ գեղեցկութիւնը», և պարծանքով է շեշտում, որ այնու ամենայնիւ շուտով զօրացաւ, խորտակեց ինքնահաւան մուզայի բռնութիւնը և ուխտեց «լինել մշակ հասարակաց պիտոյքի»

և երգել «գործ և վաստակ»։ Այդ անտարակոյս մի ակնարկութիւն է «Ազատութեան ժամերի» վրայ, ուր, արդարև, սէրը, զգայական սէրը, չափազանց լայն տեղ է գրաւել. սակայն աշակերտական նստարանի վրայ, ի հարկէ, Նահապետեանը դժուար կարող էր հաշտեցնել բուռն երիտասարդական կրքերը, տեսական խելքի թելադրութիւնների հետ։

Միևնոյն ուտիլիտար վարդապետութեան արձագանքը հնչում է և «բռնաւոր Սուլթան» և «Պոյէտ, նիւթապաշտ և քաղաքացի» բանաստեղծութիւնների մէջ։ Առաջինում բանաստեղծը վերցնում է մուզաների գլխից «էսթետիկների» հնարած խորհրդաւոր օրէօլը, յայտնելով, որ երգիչը պէտք է ցաւակից և խնդակից լինի իւր ժողովրդին։

Եւ այժմ պոյէտն այլ երազում չէ,
Որ նա որդի էր վերին երկնքի [1])
Եւ նորա հոգին պիտոյ է լռէ,
Ուր բան էր վատթար խեղճութիւն ազգի։
Եւ թէ ծնել էր, որ լինի թարգման
Քաղցր մեղկութեան և անգործութեան,
Եւ յոգևորւած, քնարի հետ խօսէր
Երբ նա երգում էր միայն գինի և սէր,—
Ո՛չ, նա փոխել էր այդ ծուռ գաղափար։
Նա բաժանորդ է ազգի ցաւի հետ։
Եւ ահա այս խօսքս թնդում է քնար.
Նա՛խ քաղաքացի, և ապա՛ պոյէտ։

Իսկ երկրորդում՝ քաղաքացին, որին պատկանում է վերջին խօսքը, բնութեան տեսարանների վրայ զմայլած պոյէտին կանչում է քաղաք «հասարակի բաղդն ու օգուտը» երգելու։

Դու այն ժամանակ անդամ ես ազգի
Եւ արժանի ես մեր սուրբ յարգանքի.—
Այս քաղաքացին ասաց պոյէտին,
Նստա՛պ քայլերով գնաց իւր գործին։

Այսպիսով, մեր հեղինակը նաև գեղարուեստի մէջ ուզում է

---

[1]) Մեր անմահ քերթողահայրը միևնոյն միտքը յայտնում է իւր աղնուազարմ մեկենասին։ (Խորենացի, III, 65)։

մեալ ազգի անդամ և պարտաճանաչ քաղաքացի։ Այդ ցանկութիւնից մինչև հրապարակախօսութիւնը հեռու չէ. մի քայլ է՛լ՝ և ահա պօէտը դառնում է պուբլիցիստ։

Կարելի՞ է արդեօք նախագուշակել, ի՞նչ հրապարակախօսութեան հետ պիտի կապէր Նահապետեանը իւր բանաստեղծական գործունէութիւնը։ Ընտրութեան համար անհրաժեշտութիւն չը կար դուրս գալու մայրաքաղաքի սահմաններից. «Ճռաքաղ» կամ «Հիւսիսափայլ»—ահա այն դելէմման, որի առաջ պիտի կանգ առներ գործի և աշխատութեան ծարաւի ապագայ բանաստեղծը։ Քանի դեռ վերջնականապէս չէին մշակւել ու ձևակերպւել Նահապետեանի տեսութիւններն ու իդէալները, քանի դրականութիւնը նրա համար լոկ ազատ ժամերի զբաղմունք էր, պարզ է որ նա կարող էր աշխատակցել անխտիր սրան կամ նրա՛ն. և իրողութիւնն այս է, որ մեր բանաստեղծը իւր առաջին փորձերից մի երկուսը—դրաբառ ոտանաւորներ—տպագրել է «Ճռաքաղում»։ Սակայն, չը խօսելով այդ ոտանաւորների չնչին քանակութեան մասին, բաւական է նկատել, որ դրանք իրանց բովանդակութեամբ իսկապէս ոչինչ կապ չ՝ունեն Մսերի օրգանի ուղղութեան հետ, և գուցէ նրանց՝ «Ճռաքաղում» լոյս տեսնելու պատճառն այն է, որ «Հիւսիսափայլը» չէր հիւրընկալում իւր էջերում գրաբառ գրուածներ։ Ցաքանչն դէպս, «Լևոնի վշտի» մէջ արած հետևեալ հեգնական ակնարկութիւնը, վերաբերւում է և «Ճռաքաղում» տպւած գրաբառ փորձերին։

Թէև երբեմն սիրտս դրաւեց
Խրթին կանոնքը խրթին արւեստի,
Բայց զարգանալով խելքըս չընդունեց.
Ցեռ ուղարկեցի,—ապերա՛խտ որդի։

Մենք տեսանք, որ Նահապետեանի այդ զարգացումը կատարւեց զուգընթացաբար նրա հասակի հետ միասին՝ բազմատեսակ հանգամանքների ներգործութեան տակ։ Լազարեանց ճեմարանի դասընթացը բոլորելուց յետոյ՝ Նահապետեանը ամփոփւած չը մնաց իւր անձի մէջ. մի կողմից ուշադիր աչքով հետևելով ժամանակակից կեանքին, մի ուրիշ կողմից նա լրացնում էր իւր գիտութեան պաշարը ընտիր հեղինակների ընթերցանութեամբ։ Միևնոյն ժամանակ նա սերտ յարաբերութիւններ էր պահպանում և Մոսկուայի հայհա-

տարակութեան, մանաւանդ համալսարանական ուսանողների հետ, որոնցից մի քանիսը իւր նախկին դասընկերներն էին [1]։ Այդ ուսանողների մասին էր ասում Նազարեանցը. «դոքա են մեր թարմ ծիլերը և ընձիւղները. դոքա են իմ առաջին սիրելիքը»։ «Եւ դոցա համար,—պատմում է Շահազիզեան,—Նազարեանցը առանց յոգնելու ման էր գալիս հայոց տներում, վաճառական ժողովարաններում, հաւաքում էր ամեն տեղից շատ կամ փոքր արծաթ և մատակարարում իւր պակասաւոր ուսանողներին»։ Բայց ուսանողների և Նազարեանցի կապը լոկ նիւթական չէր, այլ աւելի՝ բարոյական։ Այդ ուսանողները անցնում էին միևնոյն դպրոցը, ուր տարիներ առաջ անցել էր և Նազարեանցը, ծառայում էին միևնոյն գաղափարներին, որոնց ծառայել էր մի ժամանակ և շարունակում էր ծառայել Նազարեանցը. նրանք ոգևորւում էին միևնոյն յոյսերով և ձգտումներով, որոնցով ապրում ու ոգևորւում էր Նազարեանցը։ Ի՞նչ էր ուրեմն Լազարեանց ճեմարանի պրոֆէսորը այդ ուսանող երիտասարդութեան մէջ։ Նրա բարձր դիրքը, նրա հասակը, նրա անունը, նրա գիտութիւնը, նրա բարոյական արժանաւորութիւնները—ամեն ինչ նախապատրաստել էր նրան մի բնական ուղեցոյց և առաջնորդ լինելու՝ դեկավարութեան կարօտ այդ յուսալիր հայ երիտասարդութեան համար։ Ժամանակն այնպէս էր, որ ուսանողութիւնը կազմում էր հայկական ինտելիգենցիայի ամենազօրեղ տարրերից մէկը. մնացած

---

[1]) Շահազիզեանի դասակիցներից մէկն էր և Լերմոնտովի «Демонъ»-ի թարգմանիչ՝ վաղաթառամ բանաստեղծ Մ. Սաղաթեան։ «Այս վաղամեռիկ բանքարաւոր երիտասարդի մահը ականաւոր կորուստ պիտոյ է համարիլ մեր այժմեան բանաստեղծական աղքատ գրականութեան համար»—գրում էր Մ. Միանսարեանցը մեզանից քսաներեք տարի առաջ։ «Մուրճ» ամսագիրը այդ ժամանակուանից դէս առաջինը եղաւ որ նորից վիշտ տրեց ընթերցող հասարակութեանը Սաղաթեանի անունը։ Այնուհետև մեր պարբերական թերթերից մէկ («Մշակ») Լերմոնտովի մահուան չիսնամեակը լրանալու առիթով առաջարկեց առանձին գրքոյկով հրատարակել Սաղաթեանի թարգմանութիւնը։ Այդ ժամանակաւորմամբ առաջարկութիւնը չանձն առաւ կատարել «Ցարաղ»-ը իւր էջերում արտատպելով «Դեմը»։ Բայց և այնպէս, ցանկալի է ունենալ Սաղաթեանի (ինչպէս և կոմս Էմմանուէլի և ուրիշների) բոլոր գրուածները (եթէ կան առանձին գրքում ամփոփած և բանաստեղծի պատկերով և կենսագրութիւնով զարդարած։

ինտելիգենտ ոյժերը բաւականաչափ պատրաստութիւն և հեղինակութիւն չունէին ռուսահայոց մտաւոր վերածնութեան կարապետներ ներկայանալու։ Եթէ չը հաշուենք Նազարեանցի ընկեր Խաչատուր Աբովեանի և ժամանակակից Մարկոս Աղաբէկեանի գործունէութիւնը, պէտք է խոստովանել որ ռուսահայոց ինտելիգենցիայի ընդհանուր ձգտումներն ու ակնկալութիւնները յիսնական և վաթսնական թուականներին՝ ամբողջապէս կենտրոնացան «Հիւսիսափայլի» խմբագրի գործունէութեան մէջ։ Սակայն «Հիւսիսափայլը» յիշած ձգտումների և ակնկալութիւնների լոկ հրապարակախօսական արտայայտութիւնն էր. այն ինչ այդ ձգտումների և ակնկալութիւնների բանաստեղծական ամփոփման համար անհրաժեշտ էր մի Շահազիզեան իւր «Լեռնի վշտով և զանազան բանաստեղծութիւններով»։

(Վերջը միւս համարում)։